ՀԱՄԱՏԵՂ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՎ ՎԱՏԻԿԱՆԻ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐ ՆՈՐԻՆ ՍՐԲԱԶՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԴԻՆԱԼ ՏԱՐՉԻԶԻՈ ԲԵՐՏՈՆԵԻ ՀԱՆԴԻՊՄԱՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
(4 մարտի 2008 թ.)

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Վատիկանի պետքարտուղար Նորին Սրբազնություն կարդինալ Տարչիզիո Բերտոնեն խաղաղության սուրբ ողջույնով հանդիպեցին Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում և աղոթք մատուցեցին Ամենակալ Աստծուն:

Պետքարտուղար կարդինալ Բերտոնեն Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին փոխանցեց Հռոմի Պապ Նորին Սրբություն Բենեդիկտ ԺԶ-ի ի Հիսուս Քրիստոս միության ջերմ ողջույնները և եղբայրական սերը: Կարդինալ Բերտոնեն Կաթողիկոսին փոխանցեց նաև Հռոմի Պապի նամակը և հրավերը՝ այցելելու Ս. Պետրոսի Աթոռ:

Նորին Սրբությունն ու Նորին Սրբազնությունն իրենց գոհունակությունը հայտնեցին Աստծուն այս ջերմ հանդիպման համար (իբրև վկայություն Հայ Առաքելական և Կաթոլիկ Եկեղեցիների միջև կապերի շարունակ զարգացման)՝ ավելի լավ միմյանց ճանաչելու, գնահատելու միմյանց անզուգական հոգևոր ժառանգությունը, սիրելու միմյանց՝ հաստատելով մարդկությանը ծառայելու իրենց կոչումը, ինչպես պահանջում է մեր Տեր Հիսուս Քրիստոս: Նրանք համաձայնեցին շարունակելու միջոցներ ձեռնարկել այս օրհնյալ ուղղություններով:

Կաթողիկոսն ու կարդինալը հայցեցին Աստծուն, որ Հայաստանի համար այս դժվարին օրերին խաղաղություն և համերաշխություն հաստատվի երկրում: Միասնաբար աղոթեցին զոհվածների հոգիների համար՝ հայցելով Տիրոջը պահել ու պահպանել հայ ժողովրդին և զորացնել հավատով, հույսով և սիրով:

Կարդինալը Կաթոլիկ Եկեղեցու ամբողջական աջակցությունը հայտնեց Հայ Եկեղեցուն՝ իր բարոյական բարձր հեղինակությամբ ջանքեր գործադրելու՝ լուծումներ ապահովելու բոլոր խնդիրներին՝ երկխոսության և խաղաղ միջոցների կիրառման

ՏԱՐԶԻՉԻՈ ԲԵՐՏՈՒԼԵՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԻՏԱԼԻԱ, ՍՈՒՐԲ ՍԵԲԱՍՏԻ ՏԱՃԱՐ

խրախուսմամբ, և քաջալերելու պատասխանատվության համընդհանուր զգացումը, որպեսզի հայ ժողովրդի և պետության վարկը չխաթարվի միջազգային հանրության մեջ:

Նորին Սրբությունն ու Նորին Սրբազնությունը միասնաբար հայցեցին Բարձրյալին, որպեսզի պետական այրերը և քաղաքական գործիչները գիտակցեն, որ քաղաքականությունը ևս հոգևոր կոչում է, որը պահանջում է ազնվություն, փոխադարձ հարգանք, սեր, հանդուրժողականություն և աղքատների ու խոցելի խմբերի իրավունքների պաշտպանություն:

Թող Աստված օրհնի Հայաստանը և բոլոր հայերին՝ աշխարհում առաջին քրիստոնյա ժողովրդին, որպեսզի ողջ քրիստոնյա աշխարհը կարողանա շարունակել վայելել նրանց բացառիկ և անփոխարինելի ներդրումները: